ԱՄԵՆԱՅՆ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԲ
Պարտին ուղղուիլ առ—
Խմբագիր և Տնօրէն
«ՀԱՅՔ»ի
ՏՈՔ. Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ.

Ձեռագիրք Չեն Վերադարձուիր

—Բաժանորդագրութիւնք—
Ամէն երկրաց համար
ԵՐԿՈՒ ՏՕԼԱՐ ԿԱՆԽԻԿ

ՀԱՅՔ

HAIK
ARMENIAN POLITICAL AND HYGIENIC FORTNIGHTLY.—
EDITED BY
M. S. GABRIEL, M. D.
202 W. 23d Street, New York, U. S. A
To whom all communications must be addressed.
Terms for all Countries.
One Year - - - - $ 2.00.

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Editor—M. S. GABRIEL, M D. ՏԷՐ-ԽՄԲԱԳԻՐ—Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ
202 W. 23rd St., New York City, U. S. America.

Ա. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ԴԵԿՏԵՄԲԵՐ 15 1891 ԹԻՒ 24

Entered as second-class mail matter. at P.O.NewYork.NY

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԹՎ ԻՆՉԷ Հայ. ԽՆԴԻՐՆ ԵՒ ԻՆՉ ՄԻՋՈՑՆԵՐ. ԿԱՆ Զայն Լո-ծելու.— Կայլեանայ Հայ. Ընկերակցու-ութեան Նամակ առ Խմբագիրն.— Պապասխան.— Կերդոնական Յանձնախումբ.— Կայլեանայ Հայ. Ընկերակցու-ութեան Եւ Աղգ. Տրաղտականու-ութեան Նամակներ.— Նգիպտական Նամակներ.— Նամակ Կ. Պոլսէն.— Մասղասան.— Բարավանդ.— Բալէ- Բալ.— Յանկ Նէ-ղոց Հայտ 1891 թուականին:

Ի՞ՆՉ Է

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ

ԵՒ Ի՞ՆՉ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԱՆ ԶԱՅՆ ԼՈՒԾԵԼՈՒ

Ա

Հայ ցեղն յերկունս է. Նոր Հայաստան մի պիտի ծնանի կամ պիտի վիժի: Այս երկնուն՝ եթէ ունենայ յաջող ելք, պիտի լինի պատմական մեծ դէպք մի, և պիտի գրաւէ կարեւոր տեղ աշխարհիս քաղաքակրթութեան պատմութեանն մէջ: Նորածին Հայաստանն պիտի աճի իբրև հոկայից ներուն, և Եւրոպա հիացմամբ պիտի ողջունէ զվան կամ զկարին իբրև գերազանց քաղաքակրթութեան մի կեդրոն, դէպ ուր պիտի դառնան աղգաց աչերն որպէս ինոր Լիմ Ամէնք, Փարիզ կամ Պէռլին:

Ասա պիտի չձեռնարկեմք ցուցնել մեր այս հաւատոյ բանաւոր հիմունքն ցեղաբանական, հոգեբանական և ֆիզիքական: Հայն է այժմ աշխարհի վերայ այն ցեղն որ ամեն տեսակ բարեբաղդութեան և դժբաղդութեան բաժակ քամած, տիրած և տիրուած, դերի գնացած և դերի բերած, ամբարտաւան բռնապետներ ջախջախած և փոքր պետութեանց թեւարկու եղած, հին ու նոր քաղաքակրթութեանց ազդեցութիւններն կրած, ամեն մեծ կրօնէ, ամեն կարեւոր դրականութենէ, ամեն քաղաքակիրթ ժողովրդէ քաշած իւրացուցած բարձրագոյն արտադրութիւններ, և յընթացս 40 դարուց ազգային գիտակից կեանքի մի՝ ստացած է բազմակողմանի զարգացման այնպիսի հրաշալի ընդունակութիւն զոր չենք գտներ ուրիշ ոևէ ժողովրդի քով: Հայն Գերմանացւոյն նման խորախոհ և իմաստասէր, Անգլիացւոյն պէս գործնական և վաճառական, Ֆռանսացւոյն նման արամաբանող և յստակամիտ միանգամայն պիտի հանդիսանայ, և պիտի բարդէ այդ երեք յատկութեանց վերայ դեռ ուրիշ մ'ալ — հոգեկան, կրօնական զգացմանց եղական փափկութիւն մի:

Բայց հնա՞ր է որ Հայ ցեղն կարենայ իւր քաղաքակրթութիւն արտադրել այժմու պարագայից մէջ — ո՛չ: Պէտք է որ ձեռք բերէ արտաքին պայմաններն զարգացման — իւր հայ ունենայ ուսելու, իւր հայրենիք ունենայ կեդրոնանալու, իւր օրէնք ունենայ և վարչութիւն. հարկ է որ զիւր ազգային ընդունակութիւններն, որ այժմ բռնապետութեան ճնշման ներքև սեղմուած են, ազատ լինի պարզելու: Ի՞նչպէս կարելի է այս արտաքին պայմաններն իրացուցնել որպէս զի Հայ ցեղն ընծայէ աշխարհի հայկական քաղաքակրթութիւնն—որ լինի ինչ որ ընդունակ է լինելու. ահա այդ է ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ:

Բ

Մեր անմիջական նպատակին, այսինքն ինքնորիոնութեան հասնելու համար մեծապէս կարօտ ենք Եւրոպայի համակրութեան: Արդէն շատ բան պարտական ենք մեծ Պետութեանց: Ռուսիոյ ահն է որ Թրքական բռնապետութեան չափ դրած է ներկայ դարուս մէջ. եթէ այդ ահարկու քրիստոնեայ դրացին չլինէր, բռնութիւնն շատ աւելի Հայեր թրքացուցած, շատ աւելի հայ գիւղեր քրդացուցած պիտի լինէր: Եւրոպեան կառավարութեանց ազդեցութիւնն ի վերայ Բ. Դրան ուղղակի և կողմնակի օժանդակ եղած է Տաճկահայոցս յառաջդիմական շարժմանց: Պէռլինեան դաշնագրի 61 դ յօդուածն ուղղակի, իսկ Ազգային Սահմանադրութիւնն անուղղակի բայց նոյնքան ստուգիւ՝ ընդունած ենք Եւրոպայէն: Այդ երկուքն ալ գուցէ մեռեալ տառ համարուին, սակայն և այնպէս կարելի է զայնս յօգուտ գործածել: Զմոռնանք նաև այն որ եթէ, մանաւանդ Գում Գաբուի նշանակիչ ցոյցէն յետոյ, Տաճկահայն կրնայ տակաւին չնչել, չնորհիւ Եւրոպայի տիրող ազդեցութեանն է, զոր ի հաշիւ առնուլ ստիպուած է Պալատն մեզ հետ վարուելու ատեն:

Եւ ի՞նչ միջոցներով կրնամք Եւրոպայի համակրութիւնն առ մեզ աւելի զօրացունել: Հզօրագոյն միջոցն է ծանօթացնել զՀայն, և ներկայացունել զնա ոչ պարզապէս թշուառ և հարստահարեալ, այլ ազնիւ և ընդունակ ցեղ. ոչ իբրև դթութեան միայն այլ յարգանաց արժանի ժողովուրդ: Այս նպատակին շատ լաւ կը ծառայեն նոքա որք Եւրոպեան զլեուօք կը հրատարակեն մեր առածներ, առակներ, առասպելներ, մեր վիպական, բանաստեղծական և պատմական գործեր հին ու նոր:

Հայուն պատիւն յաչս Եւրոպայի բարձրացուցնելու կը ծառայեն մեր այն ազգային-ք եւ որք յաջող և բարձր դիրքեր կը գրաւեն իրենց մտային և բնաւորական բարեմասնութեամբք: Յակոբ փաշա Գաղղեան ծառայեց մեր դատին՝ իրեւ գերազանց ելմտական նախարար ծառայելով Թուրքիոյ: Նուպար Փաշա, Մելքոն Խան, Լորիս Մելիքով և այլ շատեր ծառայեցին մեր ազգին անուղղակի: Այսօր ալ Տիգրան, Եադուպ Արթին և Պօղոս փաշաներն յեղիսլոս՝ կ'օժանդակեն մեզ նոյն անուղղակի ազդեցութեամբ: Այսպիսիներու նայելով է որ Նիւ Եորքի Թրիպիւնի նման մեծ թերթ մի խմբագրօրէն կրցաւ ըսել. « ինչո՞ւ Հայք ինքեանք իսկ չկառավարեն իրենց երկիրն, Հայք որ օտար երկրաց մէջ հանդիսացած են մեծ զօրավարներ, խորին դիւանագէտներ և կարող նախարարներ: » Օտար համալսարանաց մէջ գերազանց հանդիսացող հայ ուսանողն, գործանոցներու մէջ իւր օտար ընկերաց համակրութիւնն շահող պարզ գործաւորն ալ հայրենեաց դատին կը ծառայեն նոյն կողմնակի եղանակաւ:

Բարոյական ազդեցութեանց ահագին զօրութիւնն լաւ չճանաչողներն են որ լիովին չեն դնահատեր մեր հայ հրապարակագիրներու աշխատութիւնն Եւրոպայի մէջ: Տիար Կ. Յակոբեան որ երկար տարիներ անդլիական մեծ թերթերու մէջ հրատարակեց անհամար յօդուածներ « Հայկական Խնդրոյ » վերայ, « Հայաստան» Ֆռանսերէն բաժինովն մի քանի տարիներէ ի վեր, և Լառմէնի իւր Ֆռանսերէն և անգլիերէն լեզուօք՝ շատ կարևոր ծառայութիւն կը մատուցանեն Ազգային Խնդրոյն:

Ոմանք ընդունելով հանդերձ այս հրատարակութեանց արժէքն, կը մերժեն դիւանագիտական ձեռնարկներու կարևորութիւնն: Ի՞նչ հարկ կայ, ասցա կարծեօք, Եւրոպեան կառավարութեանց խօսիլ. միթէ նոքա չե՞ն գիտեր, և յաւ ևս քան զմեզ, թէ շահ ունի՞ն կամ ոչ զՀայաստան ինքնօրէն տեսնելու մէջ: Այս առարկութիւն բանաւոր չէ: Եւրոպայի բոլոր մեծ ու փոքր Պետութիւնք իրենց շահեր գիտեն, և ծակայն դիւանագիտական աշխատութիւններն բոլոր ուժովյառաջ կը տանին. դիրար կը համոզեն փոխադարձ և հատարակաց շահերու մասին, և ի բար կը լուսաւորեն միջազգային օրինական կետերու վերայ: Եւրոպայի քաղաքական-պատմութիւնն դիւանագիտական պատմութիւն մի լինել սկսած է ԺԵ դդ դարու վերջերէն սկսեալ, և դար քան զդար առաւել էապէս դիւանագիտական կը լինի այն: Դիւանագիտութիւնն հզօր գործի մէ զոր Հայն կրնայ և պարտի գործածել ճարտարութեամբ Հայկական Խնդրոյն մէջ: Նա շատ աւելի պատրաստ է այդ գործիէն օգտուելու քան նիւթական և չօշափելի միջոցներէ:

Զեմք կրնար ուրանալ չօշափելի գործիներէ օգուտ քաղելու հնարաւորութիւնն այ, մանաւանդ թէ հարկ իսկ կրնայ ծագիլ բիրտ ուժ գործածելու: Դեռ աշխարհի վերայ արդարութեան դգացումն այնքան վեհապետօրէն չտիրեր որ ուժի օգնութեան անկարօտ լինելու վստահ լինիմք մեք Հայքս, մինչ ահագին ազգեր անգամ այդ դժնդակ հարկի ներքև կը հնձեն դեռ:

Գ.

Թէ հրապարակագրութեան և թէ դիւանագիտութեան միջոցաւ կատարուելու աշխատութիւնք չեն առանց դժուարութեան: Նոյնպէս ներքին կենդանութեան և դժգոհ գիտակցութեան ժողովրդային ցոյցերն, յոր պարագայք ինչ կրնան մղել, ունին բազմադիմի փափկութիւններ:

Ուշ կամ կանուխ Հայկական Խնդիրն պիտի ելնէ վեհաժողովոյ մի կամ դեսպանախորհրդոյ մի առջև, և Հայ Ազգն պէտք պիտի ունենայ հոն իւր ներկայացուցիչներ յղելու: Ո՞րպիսի Պատրիարքի օրով և ի՞նչ անձինք պիտի յղուին յանուն Ազգին խօսելու յայնժամ: 1878 ին Բ. Դուռն ազատ թողուց զՊատրիարք Ներսէս, վասն զի սարսափած էր Ռուսիոյ երեսէն, և անզգամ լինելու անկարող կը դտնուէր: Իրաց վիճակն այժմ բոլորովին տարբեր է: Արդեօք Դուռն ի՞նչ ճնշումներ գործածելով Պատրիարքարանի վերայ՝ յղել պիտի տայ իւր ընտրեալ Հայերն, որք երթան յԱնուն Հայոց ջատագովեն Դրան փաստն: Այս ահաւոր պատասխանութեան նախատեսութեամբ է որ ստիպուած եմք Հայ գաղթական Աշխարհի առջև բերել այն հարց թէ արդեօք հնար չկա՞յ արտաքսմանի մէջ այնպիսի մարմին մի ստեղծելու որ Պոլսոյ Պատրիարքարանէն ուղղակի կախում չունենայ, և սակայն Հայ Ազգին կողմանէ խօսելու եթէ ոչ օրինական զէթ կէս—պաշտօնական ձեռնհասութիւն ունենայ, և բարոյական հեղինակութեամբ հզօրացեալ լինի:

Երկրորդ հարց մնալ այն է թէ արդեօք կարելի չէ՞ որ ներքին ուժերն և գործունէութիւնն կազմակերպելու կարի փափուկ գործն կատարուի ոչ առանձին առանձին ընկերութիւններու կամ գործիչներու ձեռօք և այլազան ուղղութեամբք, այլ մէկ կեդրոնական Յանձնախմբի ձեռամբ յարմամբ միացած լինին արտաքսմանի ընտրելագոյն գործիչներն:

Այս երկու հարցեր մէկ մեծ խնդրոյ մէջ կը բովանդակին, որ է Հայ գաղթական Աշխարհի կազմակերպութեան խնդիրն:

« Հայք » խոնարհարար նուիրեց իւր խմբագրական էջերու մեծ կէսն այս խնդրոյ յընթացս 1891 տարւոյն, և նոյնպէս ընել մտադիր է 1892 ին ևս: Խնդիրն ուշադրութեան արժանի է, և ուրախ եմք տեսնելով որ արժանացած ալ է: Յոյս մեծ ունիմք թէ պիտի լինի այն աելի ուշադրութեան և աշխատութեան առարկայ բոլոր Յանձնախմբոց և ընկերակցութեանց առջև, ուստի պիտի շարունակեմք մեր ջանքեր:

Կը խնդրեմք ազնիւ ոգիներու աջակցութիւն յամենայն կողմանց:

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵՆԷՆ

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳԻՐ

10 Հէյթինկ փողոց
Կալկաթա 9 Հոկտ. 1891

Տր. Մ. Ս. Գարրիէլեան Բա.
Խմբագիր « Հայքի »
202 Արևմուտք, 23 դ Փց. Նիւ Եորք

Տէր,

Պատիւ ունիմ ծանուցանել ձեզ թէ ամսոյս 2 ին տեղի ունեցած նստին մէջ՝ Կալկաթայի Հայկական Ընկերակցութիւնն զձեզ Պատուոյ Անդամ ընտրեց Ընկերակցութեանս՝ ըստ տրամադրութեան 21 դ յօդուածոյ իւր Կանոնագրութեան:

Այս պատեհութեամբ կը բաղձամ յղել ձեզ օրինակ մի տպեալ Յիշատակագրին և տեղեկագրութեան Ընկերակցութեանն վասն առաջին 3 քառորդաց յանգելոց ի Փետրվար 1891:

Պատիւ ունիմ լինել,

Տէր,

Ձեր յոյժ խոնարհ ծառայն

Ե. Օ. ՄՈՋԷՍ

Նախագահ Հայկական Ընկերակցութեանն Կալկաթայի:

ՊԱՏԱՍԽԱՆ

13 Նոյ. 1891

202 Արևմ. 23 դ վից, Նիւ Եորք

Մեծ. Տ. Ե. Օ. Մողէս,

Նախագահ Հայկական Ընկերակցութեան Կալկաթայի

Տէր,

Պատիւ ունեցայ ընդունել ձեր նամակն որով կը ծանուցանէք ինձ թէ Կալկաթայի Հայկական Ընկերութիւնն, Հոկտ. 2, 1891 ի նստին մէջ, Պատուոյ Անդամ ընտրած է զիս։ Կը խնդրեմ որ ընդունիք և հաղորդէք ձեր ազնիւ ընկերակցութեան իմ խորին երախտագիտութիւնն այդ սիրալիր որոշման համար։

Այդ որոշումը, Տէր, կը նուիրագործէ իմ սրտի լռիկ բայց արդէն գոյ եղող հաղորդակցութիւնն ընդ ձեր ընկերակցութեան։

Այս պիտի համարուի նոր մէկ ցոյց մի յարաճուն հոսանացն այն հայրենասիրական համակրութեան որ կը ընթանայ ընդ բովանդակ Հայ Աշխարհն և կը պատրաստէ ամենից երջանիկ միութիւնն ի մի կազմակերպեալ մարմին։

Մեր տառապեալ մայր Հայրենիքն կ'սպասէ բացում ինչ, դրեթէ ամեն ինչ, ի դպրթականութեանց, և ձեր ընկերակցութիւնն, այնքան քաջիկ կազմակերպեալ, կրնայ ամենամեծ էլ լինել միջոցն որով մեր Հնդկական գաղթականութիւնն պիտի տայ Հայկական Շարժման առաջնորդող և տեւական մղում մի։

Կը հաւատամ, թէ մեր Հնդկաբնակ եղբարք կրած լինելով ընդ երկար զգացեցութիւն անդրիական բնաւորութեան, բարձր տատիճանաւ ունին զայն տոկուն և յարատեւով բնաւորութիւն որ անհրաժեշտ է դժուարին ձեռնարկներ ի դլուխ հանելու համար։

Այսպէս լինելով Տէր, հաւատ իմ ի հնարաւորութիւնը ձեր Ընկերակցութեան, կարի երջանիկ կը վարկանիմ զանձն լինել Պատուոյ Անդամ այն ընկերութեան որոյ յետին հասարակ անդամն լինել իսկ պարծանք պիտի համարէի ինձ։

Կեցցէ՛ Կալկաթայի Հայկական Ընկերակցութիւնն և տայէ բազում ընտիր արդիւնս։

Հաճեցէք, Տէր, ընդունել զհաւատիս իմ յարգալիր երախտագիտութեան։

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐ ՀԱՅԿԻ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Մեծ. Տիար Կ. Յակոբեան 11 Նոյ. ին գրելով առ Ն. Ե. Յանձնախումբն, Ծրագրի « Թռչակ » յօդուածին նկատմամբ կ'ըսէ. « Խնդիր է թէ արդեօք առջի տարին այդ գումարը պիտի հայթայթուի՞, և տարին այդ 800 թալէրի գումարով ինչ գործ կրնայ տեսնուիլ. տասը մի քանի պատիկը ծախքի կ'երթայ, եթէ լրջօրէն գործուի։ Կեդրոնի անդամք պարտին միայն իրեն ծախքը պահանջել ի սկզբանէ և ոչ ուրիշ։ Յանգիտ մանկանց չարչարումն արդիլելու համար և յանցաւորները պատժելու համար տարին 50 հազար ծախք կ'ընէ մի ընկերութիւն, որ միայն մի քանի տարիէ ի վեր գոյութիւն գտած է. իսկ մենք՝ բովանդակ ազգ մը ազատելու համար ի՞նչ գումար ունիմք, կուտամք ու կը ծախսեմք։»

« Հայաստան »ի Խմբագիր Մեծ. Տ. Մ. Սըվազլեան գրելով Նոյ. 18 ին առ Ն. Եորքի Յանձնախումբն նոր Ծրագրի մասին՝ կը թելադրէ որ Թռչակի վերաբերեալ յօդուածին վերայ սա յաւելումն լինի,—

Եթէ գործիչ մը ուրիշ կերպով Ազգէն օգնութիւն ընդունի, և կարող է ինքզինք հոգալ, իբրև անդամ. Կեդրոնին ընդունի նուազ կամ ոչ ինչ Թռչակ։ Երբ Կեդրոնական Ժողովն կազմուի, այս խնդիրը պիտի կարդադրէ վերոյիշեալ սկզբունքին համաձայն, և տարեկան տեղեկագրին մէջ հաշիւ պիտի տայ այդ մասին։

Նաև կը թելադրէ որ Դ. Յօդուածին 2 ը ջնջուի, քանի որ 1 ի մէջ պարունակեալ է 2 ը։

Հնչակի Պատ. Խմբագրութիւնն 21 Նոյ. թուակիր նամակին մէջ ուղղեալ առ Ն. Եորքի Յանձնախումբն կ'ըսէ. « Եթէ գործնականութեան մէջ չաջողուի Տ. Հայաստանն ամբողջովին ազատելու և ինքնուրոյն դառնայ նորա լոկ մի մասը. դրանով էլ պէտք է շնորհակալ լինենք, բայց մի միայն գործնականութեան և ո՛չ սկզբունքի ու յեղափոխութեան տեսակետից։ Մեր այդ ասածների հիման վրայ՝ առաջարկում ենք յարգելի Յանձնախմբիդ նպատակի խմբագրութեան մէջ ջնջել « գոնէ մէկ մասին » բառերը։»

« Այնուհետև նոյն կէտի խմբագրութեան մէջ, մեր կարծիքով, անհրաժեշտ է որոշել, թէ ՈՐՊԻՍԻ ինքնօրինութիւն է պէտք։ Մեր սկզբունքների համեմատ՝ մենք առաջարկում ենք Զեզ այդ կետն էլ պարզաբանել հետևեալ եղանակով — ա մ կ ա վ ա ր ա կ ա ն ինքնօրինութեամբ օժտուիլն։»

Փրփ. Զերազ կը շատանայ ըսելով թէ նոր Ծրագիրն աւելի աղէկ է։

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Կալկաթայի Հայկական Ընկերակցութեան Ազգային Բաժնին Ատենապետն, Հոկտ. 2 ի ընդհանուր նստին մէջ, ժողովոյն առջեւ դրաւ հետևեալ որոշումներն, որք Մանտալարի մի մէջ, Սեպտ. 13 ին, ուսումնասիրուած և Ընկերակցութեան անդամոց մէջ կանխապէս շրջաբերուած էին.—

1. Այս Ընկերակցութիւն համոզուած է թէ Հայաստանի գոնէ մէկ մասին ինքնօրինութիւնն—որոյ մանրամասնութիւնք յետոյ պիտի ինկատ առնուին — միակ միջոցն է հայ ժողովրդեան ազգային գոյութիւնն պահպանելու։ 2. Այժմու քաղաքական պայմանաց մէջ, այս Ընկերակցութիւն ինքնօրինութիւն ձեռք բերելու լաւագոյն եղանակն կը համարի յարգալիր և հաստատուն դիմումներով ստանալ Պէռլինեան Դաշնագիրն ստորագրող մեծ Պետութեանց հաւանութիւնն վասն հաստատման այսպիսի ինքնօրինութեան մի Հայաստանի մէկ մասին մէջ։ 3. Ներկայ քաղաքական պայմանաց մէջ, այս Ընկերակցութիւն այս ջանից յաջողութեան համար անհրաժեշտ կը համարի որ մեծ հաստատութիւն միացած լինի կատարեալ չափաւորութեան հետ հայկական պահանջմանց մէջ. և թէ աշխարհացոյց տախտակին վերայ նշանակեալ սահմանն կը թուի Ընկերակցութեանս իբրև արդար լրումն վերջին Որոշմանն պայմանաց։ 4. Մինչ առ այս նպատակ ջանքեր յառաջարուելու վերայ լինին, այս Ընկերութիւն կը համարի թէ Հայաստանի վարչութեան մէջ, չնորհիւ մեծ Պետութեանց ազդեցութեան՝ պէտք է մուտ գտնեն Հայ կրթեալ պաշտօնեայներ Անգլիայէն, Ֆռանսայէն, Ռուսիայէն, Պարսկաստանէն, Հնդկաստանէն և Ամերիկայէն։

Լոնտոնեան Լ'ԱՌՄԻՆԻՆ, (Ֆռանսերէն և անգլերէն) իւր երրորդ տարին սկսած է ամսան միանգամ հրատարակուելու պայմանաւ, և տարեկան բաժնեգինն է 15 շիլին կամ իբր 3 թալէռ 60 սէնթ։ Այս կերպով պատուական թերթին գինն աւելի դիւրամատչելի եղած է, և կը յուսամք թէ Ամերիկայի մէջ բաժանորդաց թիւն պիտի աւելնայ։

ԵԳԻՊՏԱՀԱՅՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ՆԱՄԱԿ Ա.

Գահիրէ 2 Նոյ. 1891

Բարեկամ. Երբ կը տեսնեմ որ թշուառ հայ ազգին լոյս, յոյս, հաւատ և սէր ներշնչելու համարձակութիւն ունենալ կարծող անձինք ոմանք ժամանակէ մ' ի վեր իրենց բան գործ ըրած են ազատ մամլոյ միջոցաւ կատարի պայքարներ մղել իրարու դէմ, կը փորձուիմ սա տխուր եղրակացութեան յանգելու թէ քանիսո՛ն բարերաղդ պիտի ըլլար ազգը եթէ իբր թէ ժողովրդի ծառայելու նուիրուած այլ սակայն իրաւցունէ անաւորը և անազնիւ նպատակներով հիմնուած կարգ մը թերթեր չքանային ու խափանուէին առ յաւէտ։ Արդարև շատ դժուար է ինծ ըմբռնել թէ ինչ տեսակ խիղճ ունենալ պէտք է մարդ յանուն սուրբ գործի իրար ուտելու գծուած նորաձևութիւն մը որդեգրելու համար։ Եթէ հայ լեզուի և գրականութեան սոյն ողորմելի վիժուկներ՝ եթէ ազատութիւն բառին սրբանուէր նշանաբանն խծբծող սոյն աղմուտ գրչակներ անպատճառ հայ լրագրութիւնը անբարոյական մակարդակի մը վրայ ի հանդէս ածել կ'ուզեն յաչս օտարաց, գոնեա չե՞ն մտածեր որ ժողովուրդին մէջ հագիւ ուրեմն ծլել սկսած ազատական նորընծիւղ բողբոջներն սպառոսպուռ թափթփելու կը ծառայեն։

Ո՛ թերթք իմ ազատականք, չենք ատհանջեր որ անպատճառ հայ լեզուի հրաշակերտներ ըլլաք, այլ կը փափաքինք որ սիրոյ և միաբանութեան կայծերն եւ քան զեւս հրահրէք ի մեզ. որ խեռն ու ատելութիւն մէկ կողմ թողած՝ եղբայրութեան և համերաշխ գործակցութեան օրինակ ընծայէք ձեր օգնութեանը կարօտ հէք ժողովրդին, որ դնէք ձեր անձը ի վերայ այն հօտին որուն պահապան շուները ըլլալնիդ դուք ինքնին կը խոստովանիք։ Ահա տիեզերական միութեան մը սկզբունքն ունիք ձեր առջև. քննեցէք, ուսումնասիրեցէք զայն։ Գիտցէք որ ժողովուրդը իր ճակատագրին տէրը չէ, ձեզ վստահած է զայն վարելու փափուկ պարտականութիւնը։ Տրամաբանական չէ երբէք մտածել թէ Տիեզերական Միութեան մը գաղափարին նուիրագործումն ժողովրդին վճռով ևեթ կ'իրագործուի. միանգամ ընդ միշտ պէտք է գիտնալ թէ ժողովուրդն իր ներկայ վիճակին բերմամբ, ո՛չ վճռելու ո՛չ ալ քուէարկելու տրամադիր չէ, այլ փափաքող է տեսնալ այնպէս որպէս վայել է իր պիտոյից, և այս պիտոյքներ անշուշտ պիտի հոգացուին եթէ Լ'ԱՌՄԷՆԻ, ՀՆԶԱԿ, ՀԱՅՐ, ԱՐՄԷՆԻԱ եւ ՀԱՅԱՍՏԱՆ փոխադարձ զիջումներով նախ իրենք ի մի ձուլուին, մէկ ծրագիր մը յօրինեն, մէկ դրօշակ մը բարձրացուցեն։ Ահա ասոնք են մեր բաղձանքներ. սակայն եթէ կան տակաւին այնպիսիներ, որոնք ի չգոյէ բանաւոր պատճառներու, անմիտ ենթադրութիւններով զինուած՝ յամառաբար կ'ընդդիմանան տիեզերական միութեան գաղափարին դէմ, այնպիսեաց կ'ըսենք բացարձակ. «վա՛տեր, զհայն Հայոց ուտէք, և զլեզուս չան հաչէք։»

Թերևս մեզ դիտել տրուի թէ քանի որ միութեան գաղափարը կը ջատակովենք, է՞ր Եգիպտահայք դէթ համամտական պատասխան մը չբարեհաճեցան ուղղել առն.-Եորքի Հ. Հ. Մասնախումբն վասն տիեզերական միութեան։ Բացատրենք։

Բացարձակ անիրաւութիւն է կարծել թէ Եգիպտահայն բոլորովին անտարբեր է նկատմամբ այն ընդհանուր շարժման որ կը ձգտի հայ տարրին իր տոհմային բնավայրին մէջ ապահովել կենաց՝ ընչից և պատուոյ անբռնաբարելի իրաւունքներն։ Առ այս գործակցական միութեան մը գաղափարի մշակումն ընդ տարանջատ տարբս բովանդակ հայ գաղութից՝ լուրջ և իրական թէ-ութեանց կարևորագոյններէն մին լինելը ի վաղուց ըմբռնուած լինելով Եգիպտահայոց խոհական շրջաններուն մէջ, թուականէս իբր 4 տարի առաջ կազմուեցաւ յառաջադիմասէր անուն ընկերութիւն մը, եւ՝ զարմանալի բան՝ 4 տարի յառաջ իսկ հայ ժողովրդի զանազան միջավայրերու մէջ անքա՛ն խոր արմատներ ձգած էր միութենական գաղափարի արտայայտումն, մինչ դի 20 է աւելի մասնախումբեր խնդակցեցան և համամտական նամակներով սկսան շնորհաւորել նորոդ կազմեալ Յառաջադիմասէր ընկերակցութիւնն։ Եւ քիչ էր մնացեր տիեզերական միութեան մը հիմունքն ամրապնդուէր, երբ կուսակցական խլրտումներ սկսան հիմն ի վեր քանդել միութենական շինուածանիւթն։ Դասալքութիւնք մէկ կողմէ, լրագրական հրատարակութիւնք ի Լոնտոն և ի Մոնրէլիէ միւս կողմէ, Գոգցես փութացուցին այս պատուական ընկերակցութեան քայքայումն։ Հետեւանք՝ անտի ցայսօր Եգիպտահայն կասկածոտ և վարանամիտ դարձած է դէպ ի այն շարժում, որ կը միտի տիեզերական միութեան մը գաղափարին մերձենալ. այնպէս որ այնպիսի մերձեցման մը միակ պայման կը նկատուի հոս՝ ձուլումն ընդ միմեանս վերև նշանակեալ հինգ մեծ թերթերու։

Եւ յիրաւի յաջողութեան ինչ հաւանականութիւն կրնայ ունենալ այսինչին քարոզած միութենական սկզբունքն, երբ այնինչը անհարազատ մեկնաբանութիւններով խեղդել կը ջանայ սկզբունքն իւր սաղմնային վիճակին մէջ։ Իւրաքանչիւրն ուրոյն դատանքներ ընդդրկած, բնական է որ իւրն յառաջ քշէ. և ժողովուրդը որ սոսկապէս հայրենասիրական անդիմադրելի բնազդմամբ մը կը հետևի իւրաքանչիւրին քարոզած վարդապետութեանց, կրնա՞յ արամաբանական կշիռ ի ձեռին քննել թէ ո՞րն է ոսոյգ և ազնիւ, ո՞րն է անոսոյգ և անազնիւ։

Մասնաւորելով խօսքս մանաւանդ Եգիպտահայոց համար, կ'ըսեմ, այն օրէն յորում Յառաջադիմասէր ընկերութիւնն իր մահկանացուն կնքեց, Եգիպտահայքս նմանեցանք այն անմիխիթար անձին, որ աշխարհի վրայ իւր էն սիրելին հողին յանձնած, կը կարծէ թէ այլ ևս իրեն համար ապրելու կենսական պայմաններն իսպառ անհետ եղած են, կը յածի աննպատակ մինչև որ գայ ցնցէ զինքը մի զօրեղ պարագայ, մի արտակարգ նորութիւն. և ահա այս վիճակին մէջ յանկարծ երևցաւ «ՀԱՅՐ» նորանշան կիսամսեայն, առանց մանկութեան արբունքի հասած, առանց պատանեկութեան չափահաս դարցած կորիճ երիտասարդի մը կերպարանքը, և հըրաշալի ազդուութեամբ ցնցեց զմեզ։ Նպատակը նոր չէր, այլ բաղմակողմանի երանգներով ահագ ուռճացած կատարուն թերթի մը իսկական տիպարով կը ներկայանար մեզ «ՀԱՅՐ։» Տակաւ առ տակաւ սկսանք հաւատալ թէ այս նոր ուղղնցուցով հուսկ ուրեմն պիտի կրնանք տեսնել մեր երազած էլտօրատօն, մենք որ յուսահատութեան ծանր լուծին տակ ընկճուած՝ ազգային նուիրական պարտուց վրայ խորհելու սրբազան բնազդն իսկ խեղդուած կը կարծէինք ի մեզ, և չէինք կարող մեր պարտասեալ ուժերէն նոր փորձ մը, նոր քայլ մը առնելու քաջութիւնը դուրս բերել — այնքան զգածուած էինք մեր սիրեցեալ ընկերութեան ընտանի ձեռքերու տակ չարաչար խորտակուելը տեսնելով — սգևորութեամբ մը բոլորեցանք «ՀԱՅՐ»ի բարձրացուցած դրօշակին շուրջը։ Մասնակի գումարումներու մէջ Տիեզերական Միութեան շրջաբերական Ծրագիրը ի քննին առնինք, Ծրագրոյն ամբողջութիւնը սկզբամբ ընդունելով հանդերձ, ինչ ինչ կէտերու մէջ տարակարծիք դտնուեցանք։

Յառաջիկայիս ունիմ գրել բարեփոխեալ Ծրագրոյ մասին։

ԱՆԱՁԱՌ

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷ

Կ. Պոլիս. 25 Նոյ. 1891

Բարե՛կամ. 25 հազարի կը յուսան հասցնել Քուրդ Հեծելազօրաց թիւը. մե՛ծ զօրութիւն: Աս այն Քրդերն են որոնք 1877ին Ռուսաց դէմ խաղացին գնացին դաշտերուն մէջ ձի վազցընելով և կեավուռին դէմ հայհոյելով սպառնալից. և երբ կեավուռին դէմ գտան իրենք զիրենք, քարերուն ետին անցան և հրացան ու ատրճանակ պարպեցին... օդին մէջ. և երբ տեսան թէ դիմացէն տարբեր կերպով կը վարուին, փութացին ցուցնել թէ ո՞րքան վարպետ են... փախչելու: Հազար ութ հարիւր իննսուն և.. ին անանկ պիտի չըլլայ. Քրդերը պիտի զարնեն և Խազախներն պիտի փախչի՞ն...

Արտասահմանի մէջ ինչ ալ որ ըսեն, հոս մենք կը զգանք թէ Բ. Դուռն Ֆռանքօ-Ռուսական ազդեցութիւնը կը կրէ, և թէ նախարարական վերջին փոփոխութիւնները առանց քաղաքական նշանակութեան չէին: Բարձրագոյն շրջաններու մէջ սկսած է այն համոզումը թափանցել թէ Ֆռանսական բանակը Եւրոպայի ամենէն հզօր բանակն է: Գերմանական Պետութիւնն զրկուելով ամենէն կարող դիւանագէտն եղող Պիզմարքէն, և զրկուելով նաև ամենէն հզօր բանակն ունենալու վարկէն, իւր նախագահութեան աթոռէն կամաց կամաց վար իջաւ: Կարծէ՞ք թէ Թուրք Կառավարութիւնն չնշմարեց այդ բարոյական դահլիճներուն ընդունելութիւնը: Հիմա Պալատին քաղաքականութեան վրայ դերակշիռ եղող ազդեցութիւնն է Ֆռանքօ-Ռուսականն: Սուլթան Համիտ, կառկածոտութեան և զգուշաւորութեան մարմնացումը, մէկէն իմէկ չցուցներ, բայց հետ զհետէ կը պարզուի բանը:

Սրբազան Պատրիարքը անխոնջ կ'աշխատի... Կաթողիկոս ընտրելու: Եթէ ընտրուի, հաւանական է որ «Կենցաղ»մը կամ երկուք ալ գրէ, գտնելով ան ժամանակը որ հիմա ձեռքը չանցնիր մէկ քանի անխելահասներու վարմունքին պատճառաւ: Այս ստահակները, այս ապերախտները պարապ յուզմունքներ կը հանեն և պատրիարքարանը իրենցմով կը զբաղեցընեն, ինչպէս որ Նորին Սրբազնութիւնը իւր անցած շաբթու հանած կոնդակին մէջ կը բացատրէ: Ադ կոնդակը կարդացուեցաւ մայրաքաղաքիս բոլոր եկեղեցեաց մէջ և պիտի կարդացուի բոլոր դաւառաց մէջ: Ահաւասիկ կոնդակին բոլոր միտքն ու նիւթը. — Նախախնամութիւնը իր երկրպագելի ողորմութեան շնորհիւ հաճեր է մեր ազգը դնել «ընդ հզօր պաշտպանութեամբ տիեզերական թագաւորութեան մեծի Տանն Օսմանայ,» և մեր ազգն ալ երախտագէտ զարմանքով միշտ կ'աղօթէ եղեր «վասն անսասան պահպանման Օսմանեան Փառապանծ Գահուն:» Դժբաղդաբար վերջին ատեններս անխելահասք ոմանք հաւատարմութեան ազգային շաւղէն դուրս ելած գանգատ կ'նեն եղեր, և «դուրսերն ոմանք բացէն այլ եւ այլ թերթեր և յօդուածներ կը հրատարակեն,» կ'ըսէ, և «կ'աշխատին ներսէն իրենց անձնական շահուն գործիներ ճարել:» Վերջապէս կը յորդորէ «զամենեսեան որ զգոյշ կենան և զգուշացընեն... այսպիսի ստածակներէն:»

Առի՞ք բաժիններդ, ո՛վ դուք, արտասահմանի մէջ, դուրսերն, յօդուած գրողներ և այլ և այլ թերթեր հրատարակողներ. դո՛ւ, Զերա՛զ, որ Ներսէս Պատրիարքին քարտուղարն էիր և նորա ոգւոյն և քաղաքականութեան ներկայացուցիչն ես այժմ, առի՞ր վարձքդ: Եւ դու, Յակոբեա՛ն, որ 15 տարիէ ի վեր յօդուածներ կը գրես Հայկական Խնդրոյն վրայ, առի՞ր բաժինդ. առի՞ք և դուք ձեր բաժիններն «Հայաստան» «Հնչակ» և դու ալ, բարեկա՛մ, ստահակութիւնդ մէկդի պիտի դընե՞ս, ը՞...: Նախախնամութիւնը իր երկրպագելի ողորմութեան շնորհիւ մեր քրիստոնեայ ազգը մահմեդական թագաւորի ձեռքը տուեր է իրեւ աւանդ. հասկցա՞ր: Օսմ. պետութեան առ մեր ազգն ցուցած «անկշռելի շնորհաց» վրայ պիտի զարմանա՞ս թէ չէ. խելքդ դըլուխդ պիտի բերե՞ս, անխե՛լահաս, ստահա՛կ...:

ԱՆԵՐԵՒՈՑԹՆ

Ծանօթութիւն. —

Կոնդակին մէկ օրինակն, չգիտեմք որու ձեռամբ, յղուած է նաև մեզ: Ըստ որում ծանրակշիռ խնդիրներ շօշափուած են անդ, պարտ անձին համարեցանք պատասխան մի ուղղել, իբրև խմբագիր, առ Սրբազան Պատրիարք Հայրն: Մեր պատասխանագրոյ օրինակն կը հրատարակեմք յառաջիկայ տարւոյ առաջին թուվ:

ԽՄԲ.

ՄԱՐԶԱՐԱՆ

«ՄԱՐԶԱՐԱՆ»ն գինուորական կրթութեան դասագիրք մ'է բաղում ձեւերով բացատրեալ, երկասիրութիւն Մեծ. Տիար Գ. Գասպարեանի, այժմ ընդ մամլով Գարրիէլեան տպարանի մէջ: Իր տեսակին մէջ առաջինն է հայերէն լեզուաւ, և կը յուսամք թէ լաւ ընդունելութիւն պիտի գտնէ Հայ Երիտասարդաց կողմանէ: Ահաւասիկ գրքին Յառաջաբան.—

ՅԱՌԱՋԱԲԱՆ

«Յառաջադիմութիւնը կեանք է իսկ նոյն վիճակի մէջ (Statu quo) մնալն մահ» ըսաւ նշանաւոր գաղիացի զօրավարն Լէվալ ռազմագիտութեան նկատմամբ, և յիրաւի աւելի գէշ մի Ազգի համար:

Ազգ մի երբ դանդաղ կը մնայ, կամ չունի՞ այն յարմարութիւնք իրմէ աւելի քաղաքականացեալ և յառաջադէմ ազգաց շաւղին հետեւելու, նա կամ իւր կրծանումն կը փութացնէ և կամ կը մնայ գերի մի այլ տիրողի տակ:

Հայ Ազգն բարեբաղդաբար բոլորովին զուրկ մնացած չէ այս նախանձելի ձիրքէն այսինքն՝ նա ի վաղուց անտի ունեցած է այն յատկութիւնք որոցմով կը խմորուի և կը յարմարէ ինքզինքն այն ամեն ազգաց յառաջադիմական շրջափոխութեանց, որոնց մէջ իւր բաղդն փնտռել ստիպուած է, և գլխաւորապէս այս եղած է պատճառն որ նա կ'ապրի ցայժմ մինչև իսկ խիստ նեղ պարագայից տակ:

Սակայն ինչպէս մի մանուկ քանի մեծնայ կը կարօտի զանազան և տարբեր պիտոյից որոնք մինչև չի հայթայթուին նա չիկրնար կատարելութեան հասնիլ, նմանապէս մի ազգ քանի լուսաւորուի և յառաջադիմէ չիկրնար կատարեալապէս ազատ ու ինքնիշխան լինիլ, մինչև որ չ'ստանձնէ այն հանգամանքներն որոնց պէտքը կը զգայ:

Վաճառականութիւն և կրթութիւն, հարստութիւն և գիտութիւն, դպրոցք և արհեստանոցք, խիստ ընտիր բաներ են ազգ մի զարգացնելու, սակայն բոլոր այս պանծալի յատկութիւններով հանդերձ նա պիտի մնա գերի և թերի, նա ուրիշ պէտքի մի ալ կը կարօտի որ թէպէտ վերջնագոյն կրնայ համարուիլ, բայց ոչ փոքրագոյնն, այն է ինքնապաշտպանութիւն կամ զինուորական կրթութիւն:

Կը հաւատամ որ Հայ ազգին մէջ լի են այն հանգամանաց ընդունակ անձինք, բայց ա՜ւաղ որ իւր բազմադարեան հպատակութիւնն դրեթէ բոլորովին չիջուցած է այն կրակն, եռանդն, անձնուրացութիւնն և միայն կը տեսնենք երբեմն երբեմն, որ այլ ազգաց շահերու համար Հայկայ որդիք կը փայլին իբրև պայծառ աստղեր:

Սոյն մարզարանն որ պատիւ ունիմ խոնարհաբար նուիրել իմ սիրելի ազգայնոցս, չեմ ներկայացուներ գայն իբր տիպար կամ կատարեալ դրութիւն մի զինուորական կրթութեան, այլ նկատելով մեր ընդհանուր ազգին այս ճիւղին մէջ ունեցած մանկական վիճակն, կուտամ զայն իբր այբենարան. ոչ թէ հզօր բանակներ կազմելու և աշխարհ գրաւելու առաջնորդ մի, այլ ստիպողական պարագայից մէջ որչափ կարելի է անկանոն խմբեր չուտով կանոնաւորելու և ինքնապաշտպան լինելու

յարձակիչ հրասակաց և աւերիչ աւազակաց դէմ։

Գրգոյկիս մէջ բացատրեալ զինուորական կրթութիւն է Ամերիկեան դրութիւնն, որոյ սկզբունքն կրնանք ըսել բոլոր այլ ազգութեանց ընդունած դրութիւնն է բայց երկրորդական տարբերութիւններէ որ դործածուած զէնքերու զանազանութեանը համար պարտաւորեալ են ձևերու և շարժմանց մէջ փոփոխումներ ընել, եթէ ամեն տեսակ զէնքեր գործածելն բացատրելու ձեռնարկէինք թէ չատ երկար ու խառն գործի մի ձեռք զարնելու էինք և թէ մեր դիտաւորութենէն սլիտի շեղէինք։ կը ձգենք որ մարդիչք իրենց ուշիմութեամբն իրենց մօտ գտնուած զէնքին համեմատ այս մասին պէտք եղած փոփոխումներն ընեն։

Պարտ անձին կը համարիմ իմ խորին շնորհակալութիւնս յայտնել առ Մեծ. Տր. Մ. Ս. Դաբրիէլեան որ ոչ միայն քանիցս մեզ քաջալերեց այս ձեռնարկին մէջ այլ նաև աջակցեցաւ իւր Հայկական հմտութեամբն յարմար բառերով ճոխացնել և դիւրահասկանալի ընել զայն։

Արդ՝ եթէ այն ձեռնարկութեամբս յաջողիմ դէթ յուշարար մի լինել իմ հայրենակցացս և հրապուրել գանոնք քիչ մ՚ալ այս կենսական խնդրոյն վրայ դարձնել իւրեանց ուշադրութիւն և գուցէ լինիմ պատճառ դրդել աւելի տաղանդաւոր ազգայնոցս շինել լաւագոյն գաստաղիրք, հաւատացէք որ իմ խոնարհ աշխատութեանցս վարձքն լիուլի ընդունած սլիտի համարիմ։

Դ. ԴԱՊԱՐԵԱՆ

ԱՐՏԱՒԱԶԴ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ
(ԱՐՏԱՏՊԵԱԼ Հ. Ղ. ԱԼԻՇԱՆԻ ԱՅՐԱՐԱՏԷՆ)

ԸՅԼ ԵՒ ԸՅԼՔ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԴԱԲՐԻԷԼԵԱՆ Մ. Ս.) «ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ,» ի պէտս ազգային վարժարանաց. Նիւ-Եորք, տպարան Մ. Ս. Դաբրիէլեան, 1891, (128էջ, 8 մեծ, գին 5 ֆրանք։) Նիւթին նորութեամբ և հիւսուածքով մտադրութեան և ընդունելութեան արժանաւոր երկասիրութիւն։ (ԲԱԶՄԱՎԷՊ)

ՀԱՅՐԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ

Խորին շնորհակալութեամբ կը հրատարակեմք հետեւեալ նուիրատուութիւններն. — Ազգասէր Ռ. Նէքթիքբեթէն 15 թալէռ. Ազգասէր սմն Նիւ Հէյվընէ (այն որ արդէն 5 թ. նուիրած էր) 2 թ. Ազգասէր սմն Միշիկընէն՝ 10 թ, Ազգասէր սմն Միշիկընէ՝ 10 թ։ Գումարն 37 թալէռ։

Հաճոյք է տեսնել թէ մեր հայրենակիցներէն այնպիսիներ, որք հարուստ չեն իրօք, այսպիսի ազնիւ և անցուցամոլ առատաձեռնութեամբ օգնութեան աջ կը կարկառեն մեզ։

— Հայկական Միութեան Դեկտ. 5ի նստին մէջ Տիար ԴԱՊԱՐԵԱՆ ընթերցաւ «մանրավէպք նկարչաց» խորագրով իւր գրուածն, որ իրրև զբօսալի և իրատալի միանգամայն մեծ ընդունելութիւն գտաւ ունկնդրաց կողմանէ։

— Հայկական Միութեան Դեկտ. 19ի նիստն պիտի լինի արտասովոր հանդիսաւորութեամբ, և Ամերիկացի նշանաւոր ատենախօս ՈՒԱԼՏՕ ՄԷՍԱՐՈՍ պիտի ատենախօսէ Անգղիերէն լեզուաւ։ Բոլոր ազգայինք կը հրաւրուին ներկայ լինիլ, և իրենց հետ բերել նաև իրենց Ամերիկացի բարեկամներն երկու սեռէն ալ։

— Դեկտ. 26ին երեկոյեան ժամ ճիշդ 8ին Երիտասարդաց Բր. Ընկերութեան Ֆռանսական Բաժնին սրահին մէջ, ի128, Արևմուտք, 23դ փողոց, պիտի ատենախօսէ Տր. Մ. Ս. Դաբրիէլեան Ֆռանսերէն լեզուաւ, նիւթը է La medecine Preventiue (Նախարգելիչ Բժշկութիւն)։ Ֆռանսերէն հասկցող Հայ Հայրենակիցք ևս ներկայ լինելու կը հրաւիրուին։

—Թիֆլիսի Օսմանեան Հիւպատոս անուանեալ է Հայազգի Ֆէրտինանդ Թախթաճեան։

—Զարն Էջմիածնի Հայ-Լուսաւորչական Սինոդի երկու անդամներն պաշտօնանկ ըրած և անոնցմէ ոմանք ուրիշ երեք վարդապետներ անդամ անուանած է։

—«Լ'ԱՌՄԷՆԻ» կը տեղեկանայ թէ Վարդ Պասրիքով աքսորուած է ի Սիպերիա։

—Տփխիսի «ԱՐՁԱԳԱՆՔ»էն կը տեղեկանամք թէ խսամի և գարմանի պակասութեան պատճառով Վարոնէժի հիւանդանոցում Օգոստ. է 9 կէս Հոկտ.ի 5,000 մի սպաննուած է, որպէս զի գոնեայ կաշիներն կարելի լինի ծախել։

—«ՄՇԱԿ»էն կը տեղեկանամք թէ Պարսից Շահն այժմ 63 տարեկան է, թէև դեռ ամրակազմ և աշխոյժ։ Նախանձաշիկի ժամանակ Շահն գորգի վերայ ծալապատիկ կը նստի, և նորա առջև դրուած կը լինին զանազան կերակուրներ, գլխաւորապէս ոչխարի միս և փիլաւ։ Նա պատառաքաղ չգործածեր, այլ ձեռքով կ'ուտէ կերակուրներն, իսկ փոխանակ գինւոյ քաղցր օշարակ և կաթ կ'ըմպէ։ Այդ միջոցին բոլոր պալատականք խոնարհարար յոտնկայս կեցած մի կողմ՝ երկիւղածութեամբ կը նային Իրանի պետին։... Ճաշէն յետոյ Շահն կ'երթայ ի կանանոցն, ուր, ինչպէս կ'ըսեն, առաւել քան 300 կանայք կան։ «Հարեմի ջահել» ապրիկներն, որոնք դեռ Շահի առանձին ուշադրութեան չեն արժանացեր, բոլորն միասին կ'ապրին ընդ հսկողութեամբ կանանոցի գառամելագոյն կնոջ, «թոռամած վարդին։» Շահն Եւրոպա այցելելէն յետոյ զիւր մայրաքաղաք լուսաւորեց կազով, և զիւր պալատ՝ ելեքտրական լուսով. նաև ոկսաւ Եւրոպեան թագաւորաց պէս իր ստորադրեալներուն բարեւին պատասխանել գլխի խոնարհմամբ, զոր ընել չէր բարեհաճեր առաջ։

—«ՀԱՅՐ»ի ամեն այն բաժանորդք որոց բաժանորդութիւնն 1891ի սկիզբէն չէ սկսած, կրնան ստանալ թերթիս առաջին թիւէն սկսեալ և ամբողջ տարեկանն կազմել տալ՝ եթէ կ'ուզեն։

Մեզ բաղձալի է բոլոր բաժանորդագրութիւններն Յունվար 1էն հաշուել ամեն անոնց համար որք չեն դժգամակիր։

Կան դեռ բաժանորդք ոմանք որք 1891ի բաժնեգինն վճարած չեն. այսպիսիք յուսամք 1891 և 1892 վճարումներ միանգամայն ընել կը փութան.

—ԴԱՆՈՒԲ անունով երկչաբաթաթերթ մի սկսածէ հրատարակուիլ ի Բուսչուք (Պուլկարիա) խմբագրութեամբ Մեծ. Տիար Մ. Ս. Թիւթիւնբիէֆի։ Տարեկան բաժնեգինն է 12 ֆրանք։

«Լ' Ա Ռ Մ Է Ն Ի», կը հրատարակուի ամիսն մի անգամ Ֆռ. և Անգղ. կիս։ Տարեկան բաժնեգինն է 15 շիլին կամ 3 թալէռ 60 սէնթ։ Հասցէն է

33 De Vere Cardens, Kensington, London, W.

ՅԱՆԿ ՆԻՒԹՈՑ
ՀԱՅՐԻ
1891 ԹՈՒԱԿԱՆԻՆ

ԱԶԳԱՅԻՆ

Երես

Հայկական Իրաց Վիճակն և Կեդրոնական Յանձնախմբի մի պէտքն 1
Հայ Ազգին Ապագայն 4, 18
Կազմակերպութիւն Հայ Գաղթականութեանց 10
Ծրագիր Կեդրոնական Յանձնախմբի 11, 78, 154
Օսմ. Պետութիւնն և Սուլթան Համիտ Բ. 17, 25, 33
Դաս մի Ազգային Վերջին Անցքերէն 36
Սուր Երկոսցրի 41
Հայաստանն ի դարուս 43
Կեդրոնական Յանձնախումբ 46, 51, 61, 76, 78, 79, 94, 99, 100, 101, 107, 115, 121, 123, 130, 131, 132, 139, 140, 147, 156, 187
Առաջնորդներու Պատասխանատուութիւնն 49
Օտար Մամուլն և Հայկ. Խնդիրն 57, 58
Հայեր և Բարձրագոյն Դուռն (յօդուած Պէնճէմինի)— Քննադատութիւն Պէնճէմինի Յօդուածին 66, 101
Թէ ինչպէս և ինչու պարտ է միանալ 65
Աւենախօսութիւն ի Հանդիսի Հինգերորդ Տարեդարձի Հայկ. Միութեան 73
Ազգասիրութիւն և Ազգային Եկեղեցի 81
Պատերազմ 90
Մատնիչք և Կեղծ Ազգասէրք 90
Հայ Ազգին Ուժերն 97
Յառաջ 105
Ի՞նչ Ցոյս կայ 128, 137
Աւենախօսութիւն ուղղեալ առ Ուսթըրարնակ Հայրենակիցս 145
Թէ դարձնակա՞ն է Կեդրոնացման Գաղափարն 153
Կուսակցութիւն Հայոց մէջ 262
Կուսակցական Մոլեռանդութիւն 169
Ընկերվարականութիւն և Հայկ. Խնդիրն 172
Մեր Խօսողներն ու Գրողներն 177
Ի՞նչ է Հայկ. Խնդիրն և ի՞նչ միջոցներ կան զայն Լուծելու 185

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

Մնունդ 6
Ջուրն իբր դարման 14, 29, 38
Բարոյականին Ազդեցութիւնն ի վերայ Ֆիզիքականին 47, 53, 70
Իրենք զիրենք դարմանողներ 86
Օդափոխութիւն 95
Ամառնային Օդն 110, 118
Տղոց փորք չուքի դարման 127
Ջուրն Եռացուցեալ 151
Մարտզական Գործարանք 159, 166
Քուն 182
Միս 182

ՔԱՔՈՑԱԿԱՆ

Նախանձ 148
Բարոյական Առածք 148

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Մինաս Զերաղ 50
Յակոբ Փաշա Գաղազեան 59
Հիլան Լուսինեան 115
Երես

Միհրան Սեվազլեան 123
Կարապետ Յակոբեան 132
Լորիս Մելիքով 149

ԳՔ ԱՍԼԻՔԱՂԱՆ

Հայերէն Լեզուն 52
Հայերէնն իբրև Աւենախօսական Լեզու 82, 91, 10
Ակնոյ Հայկական Առածներ 92, 123, 162
Տեսարանք ի Հայաստան 170

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ

Մարշ Արարատեան 22
Հառաչանք 23
Զէյթուն առ Հայ դաղթականութիւնս 35
Զինուոր Պատանի 37
Եղբայր եմք մեք (նոթայով հանդերձ, յաւելուած թիւին) 7 դ 54
Հայրենիք 53
Հրաւէր 110
Բողոք 113
Պլպուլն Աւարայրի 134
Գանդատ 142
Ռաֆֆիի Դագաղի վերայ 174

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Սիսուան Հ. Ղ. Ալիշանի 9
Արաւեստ Աւենախօսութեան 82
Լոյս և Խաւար Հ. Կ. Բարակեանի 84
Գիրք վասն Ծանուցանողաց 109
Արաքս Հանդէսն 174
Նոր Տարրաբանութիւն Հ. Գաֆֆանի 179
Մարզարան 189

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ՆԱՄԱԿ

Ալիշանէ (Հ. Ղ. Վ.) 20
Աթէնքէ 171
Ակնէ 158
Արարկերէ 164
ՅԱփանց Եփրատայ 95
Եգիպտական Նամականի 188
Երզնկայէ 140, 174
Թէպլրիզէ 150
Թէքսասէ 86
Թրոյէ 69
Լինէ 164
Կալկաթայէ 108
Կեսարիայէ 140, 164
Կիլիկիայէ 26, 27, 61, 75, 76, 134
Կիպրոսէ 124
Կոստանդնու-Պոլսէ 20, 39, 52, 68, 75, 76, 92, 114, 124, 149, 150, 157, 168, 189
Մանչէսթըրէ 40, 42, 82
Միննիափոլիսէ 22, 40
Նիւ Եորքէ 22, 151
Նիւ Հէյվընէ 119, 142
Ուսթըրէ 141
Սեբաստատիայէ 42, 180
Ռուսճուքէ 125
Փորթլէնտէ 95
Փրովիտէնսէ 22, 141
Քէմահէ 21
Քէօսթէնճէյէ 93
Ֆոքչանէ 107
Նամակ առ Խմբագիրն 54, 55, 70, 114, 186
Նամակ Խմբագրէն 58, 90, 113, 147, 187

ՊԱՏԿԵՐՆԵՐ

1891 Թուականին «Հայքի» ի մէջ կը գտնուին հետևեալ պատկերներն

Երես

Հ. Ղ. Ալիշան 9
Կատարինէ դոռնարոյ վերջին անուանեալ Թագուհի Հայոց 9
Զրաբուժական բաղանիք 14, 15, 29, 38
Դրամք Հայոց Թագաւորաց Սիսուանայ 19
Զէյթունցի 26
Լարանտայի ազնուական Հայ և Հայուհի իժՋ դարու 36
Ղևոնդի և Վարդանայ երդումը 45
Զիւաւոր Հայ ի Թագաւորութեան Սիսուանայ 68
Զեռագիր ստորագրութիւն Լեւոն Թագաւորի 89
Տրդատ Թագաւորին Թագն 121
Սրշակ Տէր Ղուկասով 133
Լորիս Մելիքով 149
Մեծ Տիգրան 163
Արտաւազդ Թագաւոր Հայոց 190

ԶԱՆԱԶԱՆ

Ամերիկեան բարք 118
Ամերիկացւոց երկիւղն ի գաղթականութեանց 88
Արկածք Տիկին Պիշըփի ի Հայաստան 87
Բացատրութիւն մի առ Թղթակից ՀԱՅԲԻ 142
Դրամք Հայոց Թագաւորաց Սիսուանայ 19
Զինուորական ընդունակութիւն Հայոց 133
Իմ Զեռատետրս 174
Ի՞նչ-պէս կրնայ Ռուսիոյ և Հայաստանի միջև պատերազմի առջևն առնուիլ 58
Լարանտայի ազնուական Հայ և Հայուհի իժՋ դարու. 36
Լորիս Մելիքով 149
Խմբագրական հրաւէր 133
Խրիմեան Հայրիկի Ողջոյնն առ գաղթական Հայս յԱմերիկա 181
Կալկաթայի Հայք և Կեդրոնական Ցանձնախումբն ... 156
Կալկաթայի Հայկական Ընկերակցութենէն Նամակ առ Խմբագիրն 186
Կալկաթայի Հայկական Ընկերակցութիւնն և Ազգային քաղաքականութիւն 187
Կեդրոնական Թուրքիոյ Վարժարան 55
Համահայկական Միութիւն 132
Հայասէր Ամերիկացիներ 31
Հայեր յԱմերիկա 12, 16, 21, 24, 30, 32, 44, 108, 116 125, 134 .....
Հայեր ի Հնդկաստան 181
Հայ ընտանիք յԱմերիկա 181
Հայկական Միութիւնն յԱմերիկա 28, 45, 62, 69, 165, 183
Հայկական Ընկերակցութիւն ի Կալկաթա 117, 126
Հայ հեծելազօրք 67
Հարստահարեալն Վարդենիս 103
Հրէայք և ինչու կը հալածուին 117
Ճէյմս Պրայս ի Նիւ Եորք 6
Ճէյմս Պրայս (Ուղերձ առ) 12
Մահագոյժ 81, 87, 126
Նոր Պլիու Պուքէն 64
Շաքար և ոչ Շաքար 165
Պալքանեան փոքր Պետութեանց Նիզակակցութիւնն 146
Ռուսիա աչք ունի՞ Հայաստանի 120
Սուլթան Համիտ Բ. կը զրօսնու 76

«ՀԱՅՐԵՆԻՔ», իւր այժմու ոգուվ և ուղղութեամբ արժանի է նկատուելու իբրև լաւագոյն օրաթերթը Կ. Պոլսոյ: Տարեկան բաժնեգինն է 100 ղրշ: Հասցէն է Սիթէ տ'Ալէր Մեծ փողոց, Կ. Պոլիս:



JOSEPH LAJOIE
ԱՄԱԳՈՐԾ ԵՒ ԳՈՀԱՐԱՎԱՃԱՌ
231 FRONT ST.
WORCESTER MASS

Այս քաջածանօթ վաճառատան մէջ լաւ ապրանքներն կը տրուին չափաւոր գնով, և ժամացոյցներ կը նորոգուին խնամով ի ձեռն հայազգի ճարտար ժամագործ Տիար Փրուտի, որ նոյն վաճառատան մէջ գործելով՝ անգղիերէն խօսիլ չգիտցող Հայոց մասնաւոր դիւրութիւն կ'ընծայէ:

LANDMAN & SONS,
ՎԱՃԱՌԱԿԱՆ
ՄԱՐԴՈՑ ԵՒ ՏՂՈՑ ԶԳԵՍՏՈՒՑ
ՎԱՍՏԱԿԵԼԻ ԱՊՐԱՆՔՔ ԵՒ
ԶԱՓԱՒՈՐ ԳԻՆ.
ԵՐԲՈՐԴ ԷՎԻՆԻՈՒ, ԱՆԿԻՒՆ 26 Դ ՓՈՂՈՑԻՆ

PHARMACIE FRANCAISE,
NORBERT FRANCK.
311 7th AVENUE, NEW YORK.
Դեղագիրք կը պատրաստուին խնամով

LANTELME'S
HOTEL & RESTAURANT,
40 UNION SQUARE NEW YORK CITY
16 և 17 րդ փողոցներու միջև արևելեան կողմն:
—Ընտիր Դաղղիական Խոհարարութիւն—
Նախաճաշ 40 և ճաշ 75 սենթ

ՄՇԱԿ

Կը հրատարակուի շաբաթը երեք անգամ:

Թիֆլիսի այս արդէն՝ քսանամեայ թերթն կատարելապէս ժողովրդական և ազգային է, հասարակ ժողովուրդն վեր բարձրացուցանելու կը նկրտի: Ազգին մէջ շատ տարածուած թերթ մ' է, եթէ չէ քան զամենայն աւելի տարածուածն, ունենալով այս տարի իր 1400 բաժանորդ. և արժանի է աւելի ևս ունենալու իր թերթ որ Հայութեան պատիւ և կեանք միանգամայն կը բերէ իւր խորին մշակութեամբն և բազմակողմանի հմտութեամբ:

Տարեկան բաժնեգին 10 ռուպլի, Հասցէն է
Redaction du Mschak, Tiflis, Russie

ԲԱԶՄԱՎԷՊ

Հայ հանդէսներու հնագոյն և քան զամենայն հրաչակաւորն, որ իւր յիսներորդ տարին կը սկսի 1892 ով: Որովհետև այժմ հանդէսներ շատցած են, «ԲԱԶՄԱՎԷՊ»ն աւելի բանասիրական հանդիսի հանգամանք զգեցած է, և զարդացած ու բանասէր դասուն մանաւանդ կ'ուղղէ խօսք:

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

«ԲԱԶՄԱՎԷՊ»ի ընկերն է, նոյնպէս ծնունդ Մխիթարեան Հայոց աշխատասիրութեան, սակայն ինչ աւելի արդիացեալ:

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ